ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

23 փետրվարի 2011թ. թիվ 68

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով “Տեղական ինքնակառավարման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 77[2] հոդվածով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի “Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին” ՆՀ-728 հրամանագրի 1.5 կետի ժե) ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Ա.Գևորգյանի 2011թ. փետրվարի 14-ի թիվ 20 հրամանը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի համայնքներում 2011թ. ընթացքում վարչական և ֆինանսական հսկողություն իրականացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Լ.Բերոյան - հանձնաժողովի նախագահ, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ.

Ա.Սահակյան - մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ

Ժ.Ղազարյան - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ

Վ.Հովհաննիսյան - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ

Ա.Բեջանյան - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

2. Հանձնաժողովին՝

Յուրաքանչյուր համայնքում կատարած ստուգումների արդյունքների մասին յոթօրյա ժամկետում ներկայացնել ստուգման ակտ կամ տեղեկանք:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՔՈՉԱՐՅԱՆ

2011թ. փետրվարի 23
ք.Վանաձոր